Մարզպետ Արգիշտի Մեխակյանի շնորհավորական խոսքը Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ

07.01.2025

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության հրաշափառ տոնի առթիվ:

Մաղթում եմ, որ սուրբծննդյան լույսով և տոնի խորհրդով լցվեն բոլորիս հոգիները:

Թող Քրիստոսի հայտնության այս տոնը բոլորիս սրտերը լցնի հավատքով, սիրով, բարությամբ, իսկ կյանքը՝ նոր հույսերով: Այս ավետաբեր օրերին թող ձեր ընտանիքներում թևածի խաղաղությունը, ջերմությունը և անսահման ուրախությունը: Թող այս տոնը հիշեցնի մեզ սիրո, համերաշխության և բարության կարևորությունը:

Թող Փրկչի ծննդյան լույսը վառ մնա բոլորիս տներում՝ ազդարարելով սքանչելի ավետիսը՝

«Քրիստոս ծնավ և հայտնեցավ: Մեզ և ձեզ մեծ ավետիս»: